

ԿԶԵԲ Ծրագրի անփոփազիր փաստաթուղթ (ԾԱՓ)

Ծրագրի անվանում.	Հայաստանի միջազգային օդանավակայան – Ուղևորական տերմինալ/ փուլ II
Երկիր.	Հայաստան
Ծրագրի համարանիշ:	39334
Գործարար հատված.	Օդային տեղեփոխություն
Պետական/Մասնավոր.	Մասնավոր հատված
Մեկնարկի ժամկետ.	Փետրվար, 2009
Կարգավիճակ.	Անցել է գաղափարի քննարկման փուլը
ԾԱՓ-ի բացման ամսաթիվ. ԾԱՓ-ի թարմացման ամսաթիվ.	Այս մասը ենթակա է լրացման Հաղորդակցության բաժնի ԾԱՓ խմբագրի կողմից
Ծրագրի նկարագիր և խնդիրներ.	<p>Այս ծրագիրը հանդիսանում է 2007 թ.-ի մայիսին հաջողությամբ ավարտված Ուղևորական տերմինալ (այժմ այն ծառայում է ժամանումների համար) ծրագրի առաջին փուլի շարունակություն: Առաջին փուլում բանկը տրամադրել էր 20 մլն ԱՄՆ դոլարի վարկ, իսկ ներդրումների և զարգացման Գերմանական բանկը (ԵԶԳԲ)-ը ևս 10 մլն դոլար վարկ:</p> <p>Այս առաջարկված ծրագիրը ներառում է հայաստանյան “Զվարթնոց” միջազգային օդանավակայանի Ուղևորների տերմինալի համալիրի երկրորդ փուլի սարքավորումներն ու շինարարությունը: Այն ավարտին կհասցնի օդանավակայանի տերմինալի զարգացումը՝ բոլոր գործողությունները (ժամանումներն ու մեկնումները) տեղափոխելով հին մասնաշենքից դեպի նորը: Այն նշանակալիորեն կմեծացնի ուղևորների բոլոր գործողությունների իրականացման արագությունը և հարմարավետությունը Զվարթնոցում՝ ընդլայնելով այնպիսի ծառայությունների հնարավորությունը, ինչպիսիք են մանրածախ գնումներն ու մեքենաների կայանումը:</p>
Անցումային ազդեցություն.	<p>Ծրագրի իրագործումը հանդիսանում է անցումային շրջանի արագացման հնարավորություն մասնավոր սեփականության աջակցության միջոցով տվյալ հատվածում, արդյունավետության ցուցադրում կովկասյան տարածաշրջանում, նորարար տեխնոլոգիաների փոխանցում և օդային բեռնափոխադրումների բնագավառում մրցակցության մեծացում:</p> <p>Ծրագիրը կընդլայնի Բանկի աջակցությունը Զվարթնոց օդանավակայանի տերմինալի զարգացման ավարտական փուլին, որը ֆինանսավորվում և ղեկավարվում է մասնավոր հատվածին պատկանող օդանավակայանի տնօրինության կողմից:</p> <p>Տերմինալի տարածքի և ընդհանուր գործողությունների մեծացման շնորհիվ շահագործողը կկարողանա ընդլայնել իր կոմերցիոն գործառնությունները՝ ներառելով ծառայություններ չվերթային բնագավառից դուրս: Օդանավակայանի գործառնությունների աճի հետ մեկտեղ կշարունակվի նաև հմտությունների և նորարար տեխնոլոգիաների փոխանցումը օդանավակայանի աշխատակազմին՝ ընդունելով նորագույն օդանավակայանների գործառնական կանոնակարգեր, ուղևորների ստուգման և անվտանգության ընթացակարգեր:</p>

Հայաստանի կառավարության հետ շարունակվող երկխոսությունը, կապված օդանավակայանի գլխավոր հատակագծի փոփոխության հետ, ինչպես նաև վարկի հատկացման պայմանավորվածության ֆինանսական կետերը շարունակում են հզորացնել շուկաների հնարավորությունները երկրում կառավարության հետ մեկտեղ, որը ներկայացված է Գլխավոր չվերթային տնօրինության կողմից՝ ընդունելով լրացուցիչ կոմերցիոն գործունեության և վերահսկման մեթոդներ, որոնք հնարավորություն կընձեռեն հսկել և գնահատել գործողությունների իրականացումը ղեկավար մարմնի կողմից:

Հաճախորդ.	Հայաստանի միջազգային օդանավակայան ՓԲԸ (“շահագործող”), փակ բաժնետիրական ընկերություն՝ հիմնված Հայաստանում և ղեկավարվող Ամերիկյան միջազգային օդանավակայաններ ՓԲԸ-ի կողմից (“ֆինանսավորող”): Շահագործողը ստացել է 30 տարվա Երևանի “Զվարթնոց” օդանավակայանի շահագործման պայմանագիր:
-----------	---

ԵՎԶԲ-ի ֆինանսավորում.	20 մլն ԱՄՆ դոլարիին համարժեք հիմնական վարկ; գուգահեռաբար ֆինանսավորման տրամադրում ՆԶԳԲ-ի կողմից:
-----------------------	--

Ծրագրի ընդհանուր ծախսը.	145.6 ԱՄՆ դոլար
-------------------------	-----------------

Բնապահպանական ազդեցություն.	Տես կցված էջը
-----------------------------	----------------------

Տեխնիկական համագործակցություն.	Չկա:
--------------------------------	------

Կոնտակտային տվյալներ ընկերությունում.	Մարչելո Վենդե, “Զվարթնոց” միջազգային օդանավակայան, 375042 Երևան, Հայաստան Հեռ: +374 10 493000 MWende@aa2000.com.ar
---------------------------------------	--

Գործարար հնարավորություններ.	Գործարար հնարավորությունների և մատակարարման հարցերով կապվեք հաճախորդ ընկերության հետ:
------------------------------	---

Ընդհանուր հարցերի բաժին.	ՎԶԵԲ-ի մատակարարումից դուրս ծրագրային հարցերի համար՝ Հեռ: +44 20 7338 7168; Fax: +44 20 7338 7380 Էլ. փոստ: projectenquiries@ebrd.com
--------------------------	--

Օդանավակայանի նոր տերմինալի կառուցման հետ կապված ճանապարհային կապուղիների և ավտոկայանման տարածքների շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա հիմնականում դրական են: Չվերթային ճանապարհի երկարաձգում նախատեսված չէ: Յուրաքանչյուր հակազդեցություն կարող է հեշտությամբ հայտնաբերվել, գնահատվել և մեղմացվել: Վերոնշյալ պատճառներով ծրագիրը ստացել է B/1 դասակարգում, որի համար իրականացվել է Բնապահպանական վերլուծություն և Բնապահպանական աուդիտ անկախ խորհրդատուի կողմից (Զվարթնոցի և Գյումրիվա օդանավակայանի բնապահպանական աուդիտի թարմացում, ERM GmbH, սեպտեմբեր, 2008):

Բնապահպանական քննությունը պարզեց, որ ծրագրի արդյունքում կլինեն որոշակի բնապահպանական բարելավումներ և չի լինի որևէ նշանակալի բնապահպանական հակազդեցություն: ԶՍՕ-ի բնապահպանական և առողջապահական վիճակները արդեն իսկ նշանակալիորեն բարելավվել են շնորհիվ վերագինումների, որոնք ֆինանսավորվել են Բանկի կողմից 1994-ին և 2007-ին, ինչպես նաև շնորհիվ Բնապահպանական գծողության ծրագրի (ԲԳԾ) իրականաման, որը հանդիսանում էր նախորդ վարկերի համաձայնությունների մաս: Բանկի խորհրդատուները նկատում են լավ կազմակերպված տնտեսվարություն և ուղևորների անվտանգության հոգածություն: Վերոնշյալը կշարունակի բարելավվել առաջարկված ներդրումային ծրագրի և թարմացված ԲԳԾ-ի կիրառման ընթացքում: 2008-ի բնապահպանական հաշվետվությունը նշում է, որ նախորդ ԲԳԾ-ի որոշ կետեր դեռ պահանջում են վերջնական լուծում ԶՍՕ-ում,

իսկ Գյումրվա Շիրակ օդանավակայանում առաջարկվում է առանձին ԲԳԾ-ի կիրառում, քանզի իր կառավարման տիրույթ են անցել լրացուցիչ գործառնություններ՝ ՋՄՕ-ի հավելյալ չվերթները և չվերթային գծերի համաօգտագործումը Հայաստանի պաշտպանության նախարարության կողմից:

Ֆինանսավորողը պատրաստակամ է կիրառել հետագա բնապահպանական բարելավումներ, որոնք անհրաժեշտ են տվյալ համակարգում, ինչպես նաև իրականացնել բնապահպանական հակազդեցությունների մեղմացման միջոցառումներ շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում առաջացող անհրաժեշտության դեպքում: Առաջարկված ԲԳԾ-ն ներառում է հստակ միջոցառումներ վառելիքի պահեստավորման և կիրառման համար, ինչպես նաև մնացորդների տեղաբաշխման, կեղտաջրերի և անձրևաջրերի մաքրման, հողածածկույթի պահպանման, առողջապահության, անվտանգության և շահառուներին տեղեկատվությամբ ապահովման համար: Տերմինալի բոլոր հատվածները հարմարեցված են հաշմանդամների համար:

Ծրագրի կառուցվածքը կհամապատասխանեցվի Միջազգային քաղաքացիական ավիացիայի անվտանգության կազմակերպության (ՄՔԱԱ), ինչպես նաև Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության (ԵԱԱԳ) անվտանգության և բնապահպանական չափանիշներին: Արդյունքում ծրագիրը կզարգացնի օդանավակայանի բնապահպանական, առողջապահական և անվտանգության չափանիշները և կնպաստի սպասարկման մակարդակի բարձրացմանը:

Կազմվել է հստակ մոնիտորինգային ծրագիր, որը կվերահսկի օդային արտանետումները, կեղտաջրերի արտահոսքի և աղմուկի պահպանումը համապատասխան սահմաններում: ՎՋԵԲ-ն կվերահսկի ծրագրի համապատասխանությունը առկա բնապահպանական և հասարակական պահանջներին ծրագրի ողջ ընթացքում՝ քննության ենթարկելով տարեկան բնապահպանական հաշվետվությունները, որոնցում կընդգրկվեն՝ (i) բնապահպանության, առողջապահության և անվտանգության ընթացիկ կատարողականները; և (ii) բնապահպանական ազդեցությունների մեղմացման և բարելավման միջոցառումների իրականացման կարգավիճակները: ՎՋԵԲ-ի ներկայացուցիչները կարող են նաև կատարել պարբերական այցելություններ աշխատանքների վայր՝ իրենց ընտրած պահի:

Համաձայն շահագործողի և կառավարության միջև տնօրինման տրամադրման համաձայնագրի Հայաստանի կառավարությունը պատասխանատու է 566 մարդու (156 ընտանիքի) վերաբնակեցման համար: Խոսքը այն մարդկանց մասին է, որոնք ապրում են օդանավակայանի սահմանների շառավիղում: Հայաստանի կառավարությունը համաձայնվել է, որ վերաբնակեցումը պետք է իրականացվի Միջազգային ֆինանսական համագործակցության անվտանգության քաղաքականության պահանջներին համաձայն: Այս պայմանավորվածության (համաձայնեցվել է 2006-ին) իրականացման գործում նկատվել է որոշակի հետաձգում, սակայն այժմ, ըստ երևույթի, նրանք հստակեցրել են ենթադրվող տարածքը և սկսել են խորհրդակցություններն ու ծրագրման աշխատանքները: Նոր տների կառուցման ծախսերը հոգալու է վարկառու: Որպես նախատեսված աշխատանքի բաղկացուցիչ մաս քննարկվել է վերաբնակեցման գործընթացի կարգավիճակը և ՎՋԵԲ-ի բնապահպանական կանոնակարգի համաձայն մշակվել է Վերաբնակեցման գործողության ծրագիր (ՎԳԾ): Բանկի հասարակական փորձագետները վերահսկում են ՎԳԾ-ի իրականացումը: